ԵԼԵՆԱ ՇԱԼԱԳԻՆԱ ՎԻԿՏՈՐԻ Ա/Ձ-ին
/գտնվելու վայրի հասցե՝ ք. Երևան Նոր Նորք Շապրոնի 2 նրբ. Շ 5, Բն. 1/3

«Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ի
/գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հր. Ներսիսյան 7,
գրանցման համար՝ 222.120.00271,
գրանցված՝ 19.03.2004թ., ՀՎՀՀ՝ 01002597/
Տնօրեն Հովիկ Սերգեյի Բալյանից

ԾԱՆՈՒՑՈՒՄ
/Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին/

Հարգելի տիկին Շալագինա,

«Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) և Ա/Ձ Ելենա Շալագինայի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2025թ.-ի մարտի 28-ին կնքված և 2025թ.-ի **մայիսի 29-ին կնքված համաձայնագրով ուժի մեջ մտած ԵԲԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/19-14** ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքները:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ *Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Սույն կետում նշված արձանագրությունը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:*

Ստացվում է, որ Կողմերի միջև կնքվել է Ապրանքի մատակարարման գնման պայմանագիր, որի հիմքով Վաճառողը պարտավորվել է մատակարարել նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը, իսկ Գնորդը ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի Հավելված 2-ով նախատեսված «Մատակարարման ժամանակացույց»-ի համաձայն՝ Մատակարարումը պետք է կատարվի Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև Համաձայնագրի կնքվելուց հետո՝ յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացում:

Գնորդի կողմից պահանջված ապրանքները Ձեր կողմից մատակարարվել են մինչև 2025թ.-ի սեպտեմբեր ամիսը, իսկ 2025թ. հոկտեմբերից (վերջին պատվերը ուղարկվել է հոկտեմբերի 30-ին) սկսած Գնորդի համապատասխան պատվերների հիման վրա որևէ ապրանք չի մատակարարվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մատակարարման պայմանագիրը միակողմանի փոփոխել կամ այն կատարելուց միակողմանի հրաժարվել (լրիվ կամ մասնակի) թույլատրվում է, եթե պայմանագրի մյուս կողմն էականորեն խախտել է պայմանագիրը (466 հոդվածի 2-րդ կետ)»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ *«Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ բազմիցս խախտվել են ապրանքների մատակարարման ժամկետները»:*

Տվյալ Գնորդի կողմից պահանջված ապրանքները Ձեր կողմից մատակարարվել են մինչև 2025թ.-ի սեպտեմբեր ամիսը, իսկ 2025թ. հոկտեմբերից (վերջին պատվերը ուղարկվել է հոկտեմբերի 30-ին) սկսած Գնորդի համապատասխան պատվերների հիման վրա որևէ ապրանք չի մատակարարվել:

Այսինքն 2025թ. հոկտեմբերի 30-ի պահանջագրի հիման վրա ապրանքների մատակարարումը պետք է կատարվեր առնվազն մինչև 2025թ. նոյեմբերի 2-ը ներառյալ:

Ինչպես արդեն նշվեց, մինչ օրս նշված պահանջագրի հիման վրա որևէ ապրանք չի մատակարարվել Ձեր կողմից, ավելին Գնորդը փորձել է կապ հաստատել Ձեզ հետ մատակարարման ժամկետների խախտումների պատճառը հասկանալու համար, սակայն որևէ արձագանք չի եղել Ձեր կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով «Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ն հարկադրված է 2025թ.-ի նոյեմբերի 12-ից Պայմանագիրն չմատակարարված ապրանքների մասով միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 10 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար 288.750 (երկու հարյուր ութսունութ հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամի և 192.500 (մեկ հարյուր ինսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով, վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին **(ԱԿԲԱ ԲԱՆԿ ՓԲԸ, Հ/Հ 220300126152000)**,

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն ԵԼԵՆԱ ՇԱԼԱԳԻՆԱ ՎԻԿՏՈՐԻ Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

«Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ի
ՏՆՕՐԵՆ Հ.ԲԱԼՅԱՆ

13.11.2025թ.